ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊԱՐՈՆ ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆԻՆ

Ն/3361-2025

Հարգելի պարոն Նասիբյան,

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Ռուսաստանի Դաշնության «Կենդանիների առողջության պահպանման դաշնային Կենտրոն» Դաշնային պետական բյուջետային հաստատության /այսուհետ Մատակարար/ միջև 2024 թվականի դեկտեմբերի 23-ին կնքվել է թիվ 179-24 պայմանագիրը:

Կնքված պայմանագրի համաձայն կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութի մատակարարման դիմաց էկոնոմիկայի նախարարությունը պարտավորվում է վճարել 133.919.149 ռուբլի, որից

- Մատակարարին՝ մատակարարած ապրանքի վճարի – 111.599.291 ռուբլի,
- ԱԱՀ ի գումար – 22.319.858 ռուբլուն համարժեք դրամը, որը ենթակա է վճարման պետական բյուջե, որպես հարկային գործակալ,

Ի կատարումն

- ✓ **ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 18-րդ ենթակետի** (*Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը*)
- ✓ **«Գնումների մասին» օրենք հոդված 9-ի 2-րդ ենթակետի** (*Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների հաշվառման նպատակով պետական բյուջեի հատկացվող միջոցների հաշվին գնման պայմանագիր կնքելուց կամ գնման գործընթացը չկայացած հայտարարվելուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն լիազորված*

մարմին է ներկայացնում հաշվետվություն՝ գնման գործընթացի մասին:)

- ✓ **ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ հուլիսի 11-ի թիվ 345-Ն հրամանի**

պահանջների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2024 թվականի դեկտեմբեր ամսին կնքված պայմանագիրը clienttreasury.minfin.am վճարային համակարգ մուտքագրվել է 602,587,305 դրամ պայմանագրային գնով, որի հաշվարկվել է 1 ռուբլին 4.4996 դրամ փոխարժեքի կուրսով (133.919.149 ռուբլի * 4.499 = 602.587.305 դրամ): Հաշվարկի համար հիմք է հանդիսացել 2024թ դեկտեմբեր ամսվա ռուբլու միջին փոխարժեքը և մասնագիտական ստորաբաժանման կողմից ներկայացված 2024թ նոյեմբերի 15-ի թիվ Ն/7511-2024 զեկուցագիրը:

Այնուհետև կնքված պայմանագրի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը վճարել է

- ✓ 18.02.2025թ. - կանխավճար (համաձայն պայմանագրի 2.5 կետի և ներկայացված բանկային երաշխիքի) 33,479,788 ռուբլուն համարժեք 146,678,299 դրամ (տվյալ օրվա 1 ռուբլու փոխարժեքը գանձապետական clienttreasury համակարգում կազմել է 4.3962 դրամ) Համակարգից արտահանված վճարման անդորրագիրը կցվում է:
- ✓ 20.02.2025թ. մատակարարված առաջին խմբաքանակի գումարը կազմել է 63,838,510 ռուբլի, որից 44,686,957 ռուբլուն համարժեք 198,772,053.4 դրամը վճարվել է 06.03.2025թ. (1 ռուբլու փոխարժեքը կազմել է 4.3811 դրամ), և կանխավճարից մարվել է 89,045,146 դրամը: 10.03.2025թ. վճարվել է մատակարարված խմբաքանակին համապատասխան ԱԱՀ-ն՝ 56,025,953.2 դրամ:
- ✓ 06.05.2025թ. մատակարարված երկրորդ խմբաքանակի գումարը կազմել է 47,760,781 ռուբլի, որից 33,432,546 ռուբլուն համարժեք 160,897,470.9 դրամը վճարվել է 21.05.2025թ. (1 ռուբլու փոխարժեքը կազմել է 4.8126 դրամ), և մարվել է կանխավճարի մնացած 57.633.153,2 դրամը:

21.03.2025թ. վճարվել է մատակարարված խմբաքանակին համապատասխան ԱԱՀ-ից՝ 45,882,827.2 դրամից 40,213,528.3 դրամը:

Ստորև ներկայացնեմ վերը նշվածը աղյուսակի տեսքով

Ամսաթիվ	Հաշվարկված ԱԱՀ	Վճարված գումար/ դրամ	Գումար/ ռուբլի	Նպատակը
18/02/25		146,678,299	33,479,788	Կանխավճար
06/03/25		198,772,053	44,686,957	Վճարում 1-ին խմբաքանակի համար
10/03/25	56,025,953	56,025,953		ԱԱՀ-ի վճարում/ դաբաղի պատվաստանյութ /1-ին խմբաքանակ/
21/05/25		160,897,471	33,432,546	Վճարում 2-րդ խմբաքանակի համար
21/05/25	45,882,827	40,213,528		ԱԱՀ-ի վճարում/ դաբաղի պատվաստանյութ /2-րդ խմբաքանակ/
Ընդամենը	**101,908,780**	**602,587,305**	**111,599,291**	

	Գումարը դրամ	Գումարը ռուբլի	միջին փոխարժեք ռուբլի
Հաշվարկված ապրանքի գումար	506,347,824	111,599,291	4.54
Վճարում Մատակարարին	506,347,824	111,599,291	4.54
Հաշվարկված ԱԱՀ ի գումար	101,908,780	22,319,858	4.57
Վճարված ԱԱՀ ի գումար	96,239,482		
ԸՆԴԱՄԵՆԸ հաշվարկված ԾԱԽՍ	608,256,604	133,919,149	4.54

ԸՆԴԱՄԵՆԸ վճարված գումար	602,587,305	
Տարբերություն Հաշվարկված և վճարման ԱԱՀ ի գումար, որը հանդիսանում է ԱԱՀ-ի գծով չմարված պարտավորություն և ենթակա է վճարման պետ բյուջե	**5,669,299**	
Հաշվարկված ռուբլու միջին կշռված կուրս		4.55

Ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ պայմանագրով ստանձնած ողջ ծավալով պարտավորության մարման ընթացքում ClientTreasury համակարգում բոլոր գործարքների կատարման ընթացքում **յուրաքանչյուր** վճարման դեպքում հաշվարկվել է **ռուբլու տվյալ օրվա** Կենտրոնական բանկի կողմից սահմանված արժույթային գործարքների կատարման փոխարժեքով: **Այդ դրույթը պարտադիր է և վերահսկվում է՝ պետական ֆինանսների կառավարման համակարգում՝ ինքնաշխատ ձևով:**

Այսպիսով՝ յուրաքանչյուր վճարման դեպքում հաշվարկվել է ռուբլու տվյալ օրվա Կենտրոնական բանկի կողմից սահմանված արժույթային գործարքների կատարման կուրսով, ինչ արդյունքում ստացվում է, որ պայմանագրի ողջ գումարները վճարվել է միջինը 4,55 ռուբլու կուրսով, այնինչ 2024 թ դեկտեմբեր ամսին պայմանագիրը մուտքագրվել է 4,4496 փոխարժեքով

Արդյունքում առաջանում է միջինը ռուբլու փոխարժեքի տատանում 0.1004 դրամով:

Այսպիսով՝ էկոնոմիկայի նախարարության կողմից վճարվել է

- պայմանագրով ստանձնած ամբողջ պարտավորությունը Մատակարարի նկատմամբ - 111.599.291 ռուբլի, որը դրամային արտահայտությամբ ըստ վճարման անդորրագրերի կազմել է **506,347,823.50 դրամ**

ԱԱՀ ի գծով առաջացած 101,908,780 դրամ հարկային պարտավորությունից մարվել է 96,239,482 դրամը, սակայն չի մարվել ԱԱՀ-ի մասով առաջացած հարկային պարտավորության 5,669,298.9 դրամը: ԱԱՀ-ի պարտավորության մնացորդը առաջացել է **արժութային տատանման հետևանքով**: ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ ԱԱՀ-ի գծով պարտավորությունները հաշվարկվում են ըստ

մատակարարման պահին **առկա փաստացի արժութային արժեքով՝ անկախ պայմանագրում նախապես կիրառված փոխարժեքից**:

Այդ դրույթը պարտադիր է կիրառման համար և վերահսկվում է ՝ ՊԵԿ ի էլեկտրոնային հաշվառման համակարգում (taxservice.am)՝ ինքնաշխատ ձևով:

Չմարված ԱԱՀ-ի պարտավորությունը պայմանավորված է բացառապես արտարժույթի տատանմամբ և առաջացել է պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարման ընթացքում:

Հայտնում եմ, որ համաձայն Հարկային օրենսգրքի Հոդված 78-ի 1-ին կետի (*ԱԱՀ վճարողները Օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ)* ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ստանձնած ԱԱՀ ի գծով 5,669,298.9 դրամի պարտավորությունը, որը առաջացել է Մատակարարի կողմից մայիս 6-ին մատակարարած 2-րդ խմբաքանակի դիմաց, ենթակա է մարման մինչև **2025թ հունիսի 20-ը:**

Միաժամանակ հայտնում եմ, որ 2025 թվականի «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի» շրջանակներում դաբաղի պատվաստանյութի գնման համար ի սկզբանե նախատեսված է եղել **1.118.506.810** դրամ գումար, որից

- նախարարության կողմից կնքված պատմագրի համաձայն դաբաղի պատվաստանյութի ձեռքբերման համար տրամադրվել է **602,587,305** դրամ
- Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում ծրագրին տրամադրվել է **385.437.000** դրամ

Սույն ծրագրով դեռ առկա **է 130,482,505.00 դրամ չօգտագործված մնացորդային գումար:**

Համաձայն ՀՀ պետական բյուջեի կատարման գործընթացի կանոնակարգերին տնտեսված միջոցները կարող են օգտագործվել նույն ծրագրի շրջանակում՝ նպատակային բնույթը չխախտելով:

Հաշվի առնելով, որ նշված չմարված ԱԱՀ-ի պարտավորությունը ձևավորվել է պայմանագրի կատարման ընթացքում արձանագրված արժութային փոխարժեքի տատանման հետևանքով՝ ՀՀ ԿԲ սահմանած կուրսով վճարումների կատարումից ելնելով, և ղեկավարվելով պետական բյուջեի միջոցների նպատակային և

արդյունավետ օգտագործման սկզբունքներով՝ գտնում ենք, որ չմարված ԱԱՀ-ի պարտավորության վճարումն ըստ փաստացի ծախսված միջոցների՝ նպատակահարմար է իրականացնել նույն ծրագրի շրջանակում առակ **130,482,505.00 դրամ չօգտագործված** միջոցների հաշվին:

Ուստի խնդրում եմ մասնագիտական ստորաբաժանման դիրքորոշումը և Ձեր հանձնարարականը ռուբլու փոխարժեքի տատանման արդյունքում առաջացած 5,669,298.9 դրամի չմարված ԱԱՀ ի պարտավորության գումարը Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի հենց դաբաղ պատվաստանյութի նպատակով ի սկզբանե պլանավորված, սակայն էական ցածր գնով կնքած պայմանագրի արդյունքում առաջացած **ազատ չօգտագործված** միջոցներից վճարումը իրականացնելու վերաբերյալ:

Առդիր՝ 1 փաթեթ:

Հարգանքով՝

Ֆինանսական և հաշվապահական հաշվառման

վարչության պետ Գ. ԱԹՈՅԱՆ